

հասարակութեան մէջ ցրում են հետեւեալ ձեռագիր հրաւիրատուները.

ԹԷԱՏՐՈՆԱԿԱՆ ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆ

27-ին ՅՈՒՆՎԱՐԻ ՏԱՐԻՈՅՍ, ԵՐԵՎԱՆԻ ՄԻՒՆԻՎԵՐՍԻՏԵՏԻ ՀԱՄԱՐԱՐՈՒՄԻ ՀԱՅ ՈՒՍԱՆՈՂԻ ՄԵԾԱՐԳՈՅ ՊԱՐՈՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՄԻՔԱՅԷԼ ՅԱՐՈՒԹԻՒՆԵԱՆ ՍՏԵՓԱՆԵԱՆՑԻ ՏԱՆԸ ԿԸ ԿԱՏԱՐԵՆ ԹԷԱՏՐՈՆ ՀԱՅՈՑ ԼԵԶՎԱԻ, 7 ԺԱՄԻՆ ԵՐԵՎԱՆԵԱՆ: ԽԱՂԱՐԿՈՒԹԵԱՆ ԱՌԱՐԿԱՑՔՆ ԵՆ՝

1. ԱՐԻՍՏԱԿԷՍ ՊԱՏՄԱՐԱՆԱԿԱՆ ԵՂԵՐԵՐՈՒԹԻՒՆ
 2. ՎԱՅ ԻՄ ԿՈՐԱՆԻ ԹԻՍՈՒՆ ՈՍԿԻ ԾԻԾԱՂԵԼԻ ԽԱՂԸ ՀԱՅՈՑ ՎԱՅԱՌԱԿԱՆԱՑ ԿԵԱՆՔԻՑ՝ Պ. ԱԼԱԴԱԹԵԱՆՑԻ ԳՈՐԾԸ:
- ԹԷԱՏՐՈՆԱԿԱՆ ԳՈՐԾՈՂՈՒԹԵԱՆ ԺԱՄԱՆԱԿ ԵՐԱԺԻՇՏՔ ԿԸ ՀՆՁԵՑՈՒՑԱՆԵՆ ԵՐԵՎԱՆԻ ԵՐԱԺՇՏԱՑ ԳՈՐԾԵՐԻՑ:
- ԱԶԴ. — ԱՐԻՍՏԱԿԷՍ ԵՂԵՐԵՐՈՒԹԻՒՆ ԽԱՂԱՐԿՈՒԹԻՒՆԸ ՄՇԱԿՎԵԼ Է Պ. ՓՈՒՂԻՆԵԱՆՑԻ ԶԵՌԱՄՔ:

Յայտարարութեան համաձայն՝ 1859 թ. Յունւարի 27-ին, երեկոյեան ժամը 6-ին, վաճառական Միքայէլ Ստեփանեանցի տանը, որ գտնուում էր Նովանայ Բասմաննահայ փողոցում, հաւաքուում են Մոսկւայի հայ երկսեռ հասարակութեան տարբեր խաւերը, մօտ 200 հոգի: Դրանց մէջ էին նաև «Հիւսիսափայլ»-ի խմբագիր 21 տ. Նազարեանը և բանաստեղծ — քննադատ Միքայէլ Նալբանդեանը: Ոգեւորութիւնն այնքան մեծ է լինում, որ նոյնիսկ հիւանդները գալիս են թատրոն:

Ուղիղ ժամը 7-ին բացւում է թատրոնի վարագոյրը և հնչում Օրեո յայտնի երաժշտի «Պորտիչիու» ողբերգութեան ներածութիւնը: Այնուհետեւ բեմադրւում է Ս. Վանանդեցու «Արիստակէս» պատմական ողբերգութիւնը, որի նիւթն ընդգրկում է չորրորդ դարի պատմական անցուղարձեւը — Արշակ Բ.-ի որդի՝ Պապի կեանքը և Ներսէս մեծի մահը: Զնայած պիէսն իր

բովանդակութեամբ և գեղարեւոտական կառուցւածքով թոյլ գործ էր, բայց հետաքրքիր մի նորութիւն էր Մոսկւայի հայ հասարակութեան համար: Այնտեղ, բեմի վրայ, հանդիսականները տեսնում են իրենց պատմական կեանքի մի էջը: Բեմադրութեան առանձին փայլ են տալիս մէջընդմէջ երգող երգերը: Աւելի բնորոշ է այն, որ հայերէն երգեցողութեանը մասնակցում է նաև Զիւլայիժէ վրացի ուսանողը և զբաւում հասարակութեան ուշադրութիւնը:

Պատմական ողբերգութիւնից յետոյ ուսանողները ներկայացնում են ուսանող Նիկողայոս Ալադաթեանի «Վայ իմ կորած յիսուն ոսկի» կատակերգութիւնը: Դա թիֆլիսի ժամանակակից կեանքից վերցրած մի կամէդիա է, ուր հանդէս են գալիս հայ վաճառականի կենդանի տիպերն՝ իրենց ուրոյն կենցաղով, բարքերով և հոգեբանութեամբ: Ահա թէ ինչո՞ւ այս կատակերգութիւնը գեղարեւոտական զարնութիւն է պատճառում Մոսկւայի հայ գաղութին և դահլիճը զղրղում անվերջ ծափահարութիւններով: Հասարակութիւնը թատրոնից բաժանելիս՝ ջերմ շնորհակալութիւն է յայտնում բոլոր գերակատարներին:

Ճաշկերոյր: Ներկայացումից յետոյ հասարակութեան տարբեր խաւերից կազմւած մի խումբ թատերասէրներ՝ ուսանողներին հրաւիրում են մի մասնաւոր տան մէջ և նրանց պատում ընթրիքով: Ընթրիքից յետոյ կատարւում է Մոսկւայի հայ թատրոնի տօնակատարութիւնը: Արտասանւում են ճառեր, երգւում երգեր, զբաւում դերակատարներին: Ներկայ եղող հանդիսականներն այնքան են ոգեւորւում, որ խոստանում են աւելի լաւ հիմքերի վրայ դնել թատրոնական գործը: Հասարակութեան բարձր տրամադրութեան այդ մօմէնտին ուսանող Ստեփաննոս Ստեփանեանցը (վերջը խորէն եպ. Ստեփանէ) կարողում է հայ թատրոնին ներած հետեւեալ ոտանաւորը.

Ժամ ուրախական, որ մեզ ցնծալի,
Այսօր մեր կեանքում բաղաւոր կը լինի,
Այսօր հայոց ազգ կը զբէ համարձակ,
Այս օրին կը տայ հայ ազգ իւր պսակ:

Խմենք, եղբարք իմ,
Խմենք թաս կենաց.
Բոկալները լի
Մեր ազգի կենաց:

Այսօր հայոց ազգ հաստ կամորջ կապեց,
Այսօր հայոց ազգ թատրոն հաստատեց.
Այսօր հայոց ազգ լսեց առաջինը,
Թէ թատրոն կարէ հայ լեզուս լինելը:

Խմենք, եղբարք իմ,
Խմենք թաս կենաց.
Բոկալները լի
Մեր ազգի կենաց:

Մինչ հայր կան ուրեք կ'լինի և հայ ազգ,
Երբ հայ կ'մեռնին, թո՛ղ մեռնի և ազգ.
Մեր հին ազգերից, փառք քեզ իմ Աստուծ,
Բոլոր ազգերից բաղաւոր ենք ծնած:

Խմենք, եղբարք իմ,
Խմենք թաս կենաց.
Բոկալները լի
Մեր հայոց կենաց:

Ազգի մէջ թատրոն մեծ բան է, զիտենք,
Ուրեմ, եղբարք, ուրախանանք մենք.
Մեր ազգը ստացաւ թատրոն հայ լեզուս,
Մեր ազգ մի՛ մեծ բան, որ չունէր, ստացաւ:

(Շարումակիլի)

Խմենք, եղբարք իմ,
Խմենք թաս կենաց.
Բոկալները լի
Թատրոնիս կենաց:

Ուրախանայ ազգ, ուրախանանք մենք,
Որ կան հայոց մէջ արդար ազգասէրք,
Որք իւր օգնութեամբ հիմ դրին թատրոնին.
Ողջ հայ-ազգ իւրեանց պարտաւորեցին:

Խմենք, եղբարք իմ,
Խմենք թաս կենաց.
Բոկալները լի
Այս տերանց կենաց:

Այս այս բոլորի մի է արդ պատճառ.
— Յնձացէ՛ք, եղբարք, այս փոքր մեր երաժ.
Յնձացէ՛ք, մեր կեանք նւէր է ազգին,
Յնձացէ՛ք, հասանք մեր նպատակին:

Խմենք, ուրեմ,
Խմենք, եղբարք իմ,
Խմենք թաս կենաց.
Բոկալները լի
Այս եղբարք կենաց:

Ի 27 Յունւարի ՍՏԵՓԱՆՆՈՍ ՈՒՍԱՄՈՂ
1859 ամի ՍՏԵՓԱՆԵԱՆՑ ԹԷԼԱՆԵԿԻ
ԱՐԱՄ ԵՐԵՄՅԱՆ

Թ Ա Ւ Ա Ն Ձ Ա Ն Ք

Երազահաս ողորմութեան եմ կարօտ.
Սիրտըս եթէ լեցուն ըսկիհ մ'ընէիր
Լուս աղօթքի տաճարին մէջ խնկահոտ...

Պիտի բղխէ՛ր արցունքի ուր կաթիլով
Ազը հոգւոյս որուն ահա փշրեցի
Բիւրեղ սափորն ուր կար երկինք մը գինով:

Դարձնէ՛ր աղանետունն ամայի
Ճերմակ երամը յոյսերուս ցիրուցան,
Դուն որ հովին գիտես ծաղիկը վայրի...

Մեղուներն ալ իմ տենչանքիս արեւին
Օր մը լուսե՛ղ այս փեթակէն մեկնեցան
Երբ դեռ կանանչ էր ջուրերու հայելին...

Առնին հետ ես եկե՛ր եմ ոտքիդ մօտ.
Սիրտըս ահա՛ լեցուն ըսկիհ մ'արիւնի.
Երազահաս ողորմութեան եմ կարօտ...

Մատներուս ծայրը կակաչն է հողերուն
Մատներուս ծայրը ոսկի՛ն է ցորենի.
Ու ձայնիս մէջ կայ հովին սիրտը թրթուուն

Որ տրտմաւէտ արշալոյսով կ'արիւնի...

ԱՐԱՄ ԵՐԵՄՅԱՆ